— Քանի՞ օրումը կը վերջացնես այս արտի վարելը, — հարցրի ես, կամենալով փոխել խօսակցութիւնը, որ խիստ տխուր տպաւորութիւն գործեց իմ վրայ, երբ մտածում էի, թէ ինչով է ապահոված երկրագործը, որ միշտ իր զէնքով պէտք է պահպանէ իր անասունները եւ իր մշակութեան բերքը աւազակների յարձակմունքներց: Բայց միթէ՞ իւրաքանչիւր մշակ կարող է որսորդ Աւօյի որդին լինել եւ զէնք բանեցնել... ի՞նչ կարող է լինել այն խեղճերի դրութիւնը, որոնք մի հասարակ դանակ եւս չունեն իրանց գրպանում:

Հասօն չլսեց իմ հարցմունքը, եւ ես միւս անգամ կրկնեցի, թէ քանի օրում նա կարող էր վարել իր արտը:

— Եթէ տէրը յաջողութիւն կը տայ, ինչ մեծ բան է նրա վարելը: — Դէպի ա՛ջ, Մարալ, դու այսօր հէնց թէ խելքումդ չես, — այս ասելով նա բզեց կարմիր եզան կողքը: — Տե՛ս, «գութանը է այնտեղ էր կանգնած, — նա իր վարոցով ցոյց տոեց երկինքը, — իստակ այնտեղ, երբ ես լծեցի արօրը. հիմա աստուծոյ օգնութիւնով, տեսնո՞ւմ ես որքան վարել եմ: Վաղոայ գործը օրինած է, թէ չէ, երբ արեւը բարձրացաւ, այն ժամանակ ոչ թէ մեղաւոր մարդուն, այլ անբան անասուններին էլ մեղք է բանեցնելը, իստակ էրում է արեւը, չես կարող շունչ քաշել: — Դէպի կորդ, Ջեյրան, ի՞նչ ես հոգիդ տալիս, — այս անգամին նա բզեց մոխրագոյն եզան կողքը:

Կարծես նրա եզները — Մարալը եւ Ջեյրանը — հասկանում էին իրանց տիրոջ նկատողութիւնները եւ այնպէս խելացի կերպով տանում էին գործը: Բայց Յասոն տեսնելով՝ ես երկար զբաղեցնում եմ նրան իմ հարցուփորձով, ուզեց ինձ որպէս ասում են՝ «իր գլխիցը ռադ անել» եւ այս մտքով ասաց.

— Դու սիրո՞ւմ ես, Ֆարհատ, առաւօտեան խիար (վարունգ) ուտելը, դա սրտի համար լաւ է, գնա՛յ, այն խոտերի մէջ մի քանի հատ թաքցրել եմ, որ սառն մնան, կտրէ ու կե՛ր, թէ դանակ չունես, ես կը տամ:

Ես շնորհակալութիւն արեցի, յայտնելով, թէ սովորութիւն չունեմ անօթի որեւիցէ միրգ ուտել, եւ մնաք բարեաւ ասելով, հեռացայ աշխատասէր մշակից:

Կրկին զարթեցան իմ մէջ նոր եւ նոր մտածմունքներ, երբ ես յիշեցի Հասօի խօսքը՝ «լաւ է աշխատել առանց վաստակի, քան թէ անգործ մնալ, անգործութիւնը մեռելներին է պատկանումէ: Ես այն ժամանակ չկարողացայ հասկանալ, իսկ այժմ հասկանում եմ այս խօսքերի իմաստը: Աշխատութիւնը, որքան եւ անշահաւէտ լինէր գործողի համար, վաղ թէ ուշ կարող էր վարձատրութիւն գտնել, օգուտ բերել, նա ունէր իր փառաւոր ապագան: Իսկ անգործունէութիւնը, իրաւ որ, մեռելութիւն է, նրա սկիզբը եւ վախճանը